Արարատ

Դաշտի միջից բացվում է ինչպես միֆ, ինչպես ճանապարհն հսկող ալֆա՝ երկու գագաթների պարանոցին ամպի միֆական ծվենը, լանջերը՝ ձյունից փայլուն ու տաք, հայելային, քանդող, անդավան, հրահրող, գիտի ուր, ասում է՝ գնա, հասիր, ետ մի նայիր, գտիր, ջնջիր, պոռթկա: *Ցուրտ է, խավար է հեռվում եւ անժպիտ*. հեռվում՝ մեկ այլ տեղ, բայց հիմա, այստեղ՝ Արարատի իմ փեշերին սլացող այս ճանապարհի վրա բացում եմ, ասում է, քո առաջ արեւը:

Արեւը բացվում է աշնանային ճեպընթաց այգիների վրա՝ գույներից ծանրաբեռն, ու կարմիր ծառաստանը ենթարկվում է բոցերին ու տապին: Մայրուղին՝ E117, գնում է ուղիղ, անփոս, հարթ՝ ճղելով միջոցը, կապույտ ընթանալով եղեգների փրփուրե գլուխների միջով: Ամենուր եղեգներ են՝ կորցրած իրենց ամառային թարմությունը ու աշնան մեջ վերածված լուսագլուխ առասպելների: Խաղողի այգիներն արդեն թաղված են՝ ընկողմանած հողի ծանր գուղձերի ու սարի շնչի տակ:

E117-ը դուրս է գալիս երիտասարդ լուսանկարիչ կնոջ ուղիղ սրտից ու փռվում է մեքենայի դիմաց՝ իր հրավիրող ասֆալտ-բետոնով: Լուսանկարչական խցիկը դրված է կողքին՝ մեջը Արարատի երկու՝ ոչինչ չփոխանցող պատկեր: Գրեթե չգիտի, թե ուր է գնում: Հեռախոսի Գուգլ քարտեզը ցույց է տալիս ճանապարհը՝ բացարձակ անվրեպ, բայց չի ասում՝ ինչ է տեղի ունենալու ճանապարհի վերջում:

Գնում է տղային լուսանկարելու, որի անունը Սպարտակ է: Նրա կերպարը խորանում է ճանապարհն ի վեր, իր լուսանկարչական շարքի արժանի բնորդն է, ում հետ հասցրել է երկու բառ փոխանակել: Ցնտղում է նրան մտքում, տեղադրում տեսարանների մեջ, որոնք պիտի պատմեն տղամարդկային սեռականության մասին, որոնցից, ենթադրում է լուսանկարիչ կինը, տղամարդիկ իրենք անգամ տեղյակ չեն: Ամեն դեպքում նրանք, ում ինքն է ընտրում լուսանկարելու: Գնում է որպես հայտնագործող, նրա վրա իր տեսախցիկի աչքը գցող, նրան՝ իրենից առաջ ճանաչող, նրա նոր առնականությունը չափագրող: Իրենից հեռացնում է շահագործման մասին մտքերը. լուսանկարը միայն տեսանելու համար է:

Մայրուղուց պիտի թեքվի Արտաշատ տանող ճանապարհով, հետո այնտեղից էլ հասնի Օձասարի տակ պառկած գյուղը: Հերթով կարդում է հանդիպող բոլոր ցուցանակները,

սիրտը լույսից զարկում է: Կարո՞ղ է նկարել այն, ինչ ուզում է: Ինչո՞ւ է քշում դեպի այս անծանոթ աշխարհով հովիտը:
After three hundred meters turn right, ասում է կանացի ձայնը հեռախոսի միջից: Թեքվում է: Ճանապարհը ոլոր գալով մտնում է Արտաշատ:
Քաղաք մտնող փողոցը բարեկարգ է, ճանապարհի հանդիպակաց երթուղիների արանքում կլորիկ ծառերով մայթուղի է, որի ծառերը դեռ կանաչ-կանաչ են: Ինչ-որ տեղ աչքին է ընկնում ոչ էն է ջրավազան, ոչ էն է շատրվան, բայց ինչ-որ ջրային մակերեւույթ մնում է տեսողական հիշողության մեջ: Տեսարանն այնուհետեւ լքվում է քաղաքայնությունից, սկսվում է ծայրամասային փնթի շենքերի հերթագայող շարքը, կրպակները, փողոցն ամեն տեղից հատող մարդիկ: Անցնում է ինչ-որ թաղման թափորի միջով՝ փնտրելով դագաղը:
Երբ դուրս է գալիս գյուղ տանող ճանապարհ, ռադիո Եվրոպան սկսում է խշշալ, բայց կան էլի եղեգներ՝ իրենց բարձր ճոճվող իրաններով: CD է դնում: Ճոճվում է նրանց հետ: Անցնում է գյուղական գերեզմանոցի կողքով: Տափակ, չներշնչող գերեզմանոց է՝ առանց ստվերների: Սրբատաշ քարերի կղզյակ ընդամենը:
Գյուղի գլխին կամար է կապել գյուղի երկար անունը՝ կարմիր տառերով: Կանգ է առնում ծխելու: Հասավ:
Զանգում է՝ Սպարտա՞կ: Ես արդեն ձեր գյուղում եմ: — Ճանապարհով ուղիղ եկեք:
Ասֆալտի պառկած ոստիկաններն այնքան շատ են ու այնքան անփույթ-լայն են սարքված, որ ստիպված է քսան մետրը մեկ արգելակել մեքենան, հետո թողնել, որ եղած արագության հաշվին ինքնիրեն բարձրանա թմբին ու դխկալով ընկնի մյուս կողմում: Մտքում հայհոյում է սարքողներին:
Սպարտակը կանգնած է ճանապարհի եզրին՝ ոչ սպասողի նման: Կարծես ձանձրացող եղանակ լինի, որ անշտապ սպասում է սեզոնային իր հերթին: Ձեռքերը կապույտ սպորտային համազգեստի գրպանում են, ոտքերին՝ մուգ կապույտ տնային հողաթափեր: Անջանք ցույց է տալիս տունը, քայլում է մեքենայի հետեւից: Լուսանկարիչը անճարակ տեղավորում է մեքենան՝ մի քանի անգամ հետ-առաջ անելով, սեղմված ծառի ու ավազե թմբի արանքում: Կարծում է՝ որ իջնի, պիտի գրկի նրան, բայց տղան գլուխը կախ բարձրանում է տան աստիճաններով: Հարցական հետեւում է նրան:
Խոհանոցից ընդառաջ է գալիս տղայի մայրը, սիրալիր ողջունում է: Լուսանկարիչը բառեր է ասում, իրերը տեղավորում է աթոռին, ժպտալով մեկնում է ձեռքը: Խոհանոցի դռնից

հայտնվում է տատը՝ ձիգ, կապույտ, խարտյաշ ռուս կին, ու լուսանկարիչ կինը վախով հայտնաբերում է, որ լինելու է ռուսերեն խոսելու անհրաժեշտություն: Տղան բոլորովին չի խառնվում կատարվողին, հարեւանցիորեն կանգնած է՝ հենված խոհանոցի անգաջ պատին: Ծանոթանալը, իրար լավ խոսքեր ասելը նրանց հոգսն է, որը նա բոլորովին չի կիսում: Կանգնած նայում է հոնքերի տակից՝ պարզապես սպասելով:

Սուրճի պատրաստությունը միանգամից է սկսվում, ու երիտասարդ կինը խնդրում է նայել տունը՝ նկարելու անկյուն գտնելու համար: Սպարտակն անցնում է առաջ՝ ձեռքերը միշտ գրպանում: Անցնում են հյուրասրահի կողքով, քրոջ սենյակի կողքով, եղբոր սենյակի կողքով ու կանգնում են տղայի սենյակի գլխին: Միայն մի հայացք է հասցնում գցել. անկողինը թափված է, բոթասները շուռ են եկած իրար վրա, նեղ փոքր սենյակ է, դրված է համակարգիչ, սավանն ու ծածկոցները կապույտ են, ճմռթված: Տղան անտարբեր է իր սենյակի թափթփվածությանը:

— Գնանք բակ,— ասում է:

Քայլում է կնոջ առջեւից: Բակում շները վանդակի միջից իրար են կոտորում՝ ուրախացած հյուրի գալով: Լուսանկարիչ կինը մոտենում է, ցանցի արանքից մատը դնում է նրանցից մեկի անհանգիստ քթին, ու շունը սկսում է լափլիզել ճաղերը: — Հավերը: Կինն իբր հետաքրքրված է, նայում է հավերի ու հնդկահավերի խառը խմբին, որ աննպատակ թափառում են՝ քսմսվելով իրար ու հողի մեջ ոսկի ման գալով: — Գնանք տանիք: Երբ քայլում է հետեւից, նայում է նրա բաց կոճերին, որ կրունկի ոսկորի վրա կարմիր հետքեր ունեն՝ կոշիկներից մնացած:

Տանիքի աստիճանները թեք, կլոր երկաթե ձողեր են՝ բավականին վտանգավոր: Տղան բարձրանում է՝ առանց հետ նայելու, առանց օգնության փորձի, ինքն իր համար, վերացած հետեւից եկող կնոջ քրթմնջացող ճիգից: Շուրջը ամեն բան թափթփված է՝ երկաթեղեն, փայտումայտ, լարեր, ու կինը տեսնում է, որ նա կարծես օտարական լինի այս տան մեջ, նրան չի վերաբերում իրերի անշիտակ դրությունը: — Աղավնիներն են: Թի՛ռ, թռնում են, ներս են լցվում տանիքի բացվածքից, մի վայրկյան նստում, կերի են սպասում, հետո էլի թի՛ռ, հեռանում են կտուրից բացվող երկնքի մեջ: — Դու ես կերակրո՞ւմ: — Չէ:

— Չրերը,— ցույց է տալիս այնպես, ասես ձանձրացող ուղեվար է՝ անտարբեր տուրիստի հուզումներին:

Տանիքի անհաստատ այուների մեջ կանգնած է Արարատը՝ հարեւան կտուրի գլխին: Փռել է իր նեռնե լանջը ու վառվում է գյուղի դեմ: Լուսանկարիչ կինը սարն է նկարում, հետո

նայում է լուսանկարները ու երբ մեքենայորեն շրջվում է, տեսնում է, որ տղան դուրս է եկել տանիքի պատուհանից ու հայտնվել հարեւան տան արեւոտ կտուրին, որի տակ արծաթին է տալիս փոքրիկ մատուռի գագաթը: — Հանվի,— ասում է տղային: Տղան ձեռքը գլխի հետեւից տանում է թիկունքին ու վերեւ է քաշում շապիկի մեջքը: Տեսախցիկն անդադար աշխատում է՝ ֆիքսելով նրա բոլոր շարժումները: Շապիկը՝ թրք, թրք, թրք, դուրս է թողնում նրա լցվող, մկան կապող մարմինը: Ուսերի վրա ստվերներ են առնում մկանների պիրկ գլուխները: Տղան պառկում է տանիքին, գլուխն հետ է գցում, գիտի ինչպես անել: Ոտքը դնում է ոտքին: — Ոտքդ իջեցրու: Ենթարկվում է: Թրք, թրք, թրք: Տանիքի վրա ծավալվում է նրա մարմնի երկիմաստությունը, մատուռը ներքեւից հորանջում է՝ անտարբեր լցվող, տեսարան հագնող միջոցին: Մազերը նոր են պատում որովայնը, որ ներքեւում՝ պորտի շուրջը, արդեն մուգ, սեւ շերտ են գոյացրել: Կողերի կարմիր տարիքային բծերն ու ցանը նայում են Արարատին: Մկանները երեւում են ստվերների միջով: Դրանց ամեն մի թրթռոցը կարեւոր է: Նկարում է անկշտորեն: Շահագործում է նրա վեշտասնամյա մարմինը՝ բոլոր հնարավոր ձեւերով, բայց ներսում արդեն հասունանում է մոտիվը, որ շահագործվողը նա չէ: Շփոթված է ինչ-որ բանից, շփոթված է իր տեսախցիկի անկարողությունից, օդի մեջ անկարողության զգացողություն կա: Հանկարծակի հայտնված փոքր եղբայրը մերկ մարմնի վրա զոռում է, որ մաման ասում է, որ սուրճը պատրաստ է: Իջնում են, կինը՝ դողալով աստիճանների վրա:

Սպարտակը բացում է ֆանտայի շիշը: Հայացքով հարցնում է՝ լցնի՞: Մերժում ստանալով՝ հանգիստ լցնում է իր բաժակը, տատին ու մորը չի առաջարկում: Լուսանկարիչ կինը ծխում է՝ սուրճի հետ խառնելով գլուխը լցվող տարօրինակ մտքերը: Խոսում է մոր հետ՝ նկատելով, որ փորձում է հաճոյանալ տղային: Փորձում է նրան դեմքով դեպի իրեն շրջել: Տղան պատառաքաղով ճզմում է տորթի բաց մանուշակագույն վարդն ու տորթից իր համար կտոր պոկում: Ուտում է ծաղկամանի հետեւը նստած՝ սքողված երեք կենտ վարդերի ցողունների ու տերեւների հետեւում: Անխոս: Միայն երբեմնակի հայացք տակից՝ կապույտ-մոխրագույն աչքերի, որոնց վրա իրենց հատուկ դերն ունեն հոնքերը: Երբ հեռախոսը զնգում է, ու Սպարտակն հեռանում է խոսելու, մայրն ու տատը, իրար հերթ չտալով, հայտնում են իրենց անհանգստությունը տղայի համար՝ ոչ մեկին նման չէ: Լուսանկարիչ կինն ասում է՝ դե, դեռահաս է, պադռոստրկ՝ ասում է տատին, կանցնի երեւի: Ինքն էլ չի հավատում իր ասածին: Տատը չգիտի, որ նկարել է թոռանը մերկ՝ տանիքի վրա:

Աննա Դավթյան, նոյեմբեր, 2019

Գնում են այգի: Սպարտակը կեսբերան հրահանգում է տատին նստել մեքենայի դիմացը:
— Տուտ, Լյուբա: Նախ այդ անսպասելի պարկեշտությունը, որով տատին զիջում է իր տեղը, հետո այդ ռուսերենը՝ կորած այդ գյուղի հողակտորների մեջ: Որով ավելի կապվում է տատին ու ետ է թողնում մորը, որ հազիվ է կապում ռուսերեն բառերը: Հետո բերանի այդ հնչեղ ապարատը, շրթունքների ձեւը, որոնցից ռուսերենը դուրս է գալիս արտասովոր գեղեցիկ, կտրուկ, աներկբա: Մտքի մեջ մարսված, սովոր, անխոց:
Տատը ենթարկվում է հրամանին՝ բոլորովին չլինելով խեղճ մեկը: Ինչ-որ բանով, ինչ-որ մի բանով թոռը անցնում է, գերազանցում է տատին, որի մեջ վստահ է նախ ինքը՝ տղան, ու տատը մաքառում է այդ ուրիշության դեմ՝ փորձելով երես-երեսի գալ նրա հետ, խոսեցնել հետը, ուղղորդել: Ինչ-որ կռիվ ունեն իրար հետ, որ բառերով չէ, այլ ավելի շատ նրանց հոգիների մեջ է, ու հիմա այս ամենին խառնվում է լուսանկարիչ կինը՝ դառնալով երրորդ կողմ, տատի նման չուզելով, բայց գերեվարվելով, տրվելով նրա հանգստավետ համրությանը, որով տարածում է իր ինքնավստահությունը, իր կախարդանքը նրա վրա՝ շփոթեցնելով ու անկարության մատնելով: — Սպարտակ, դու հատուկենտ բառերից բացի՝ երբեւէ խոսո՞ւմ ես,— փորձում է վրա լինել կինը: — Հա:
Քշեց: Տատը դիք նստած էր կողքին, ցույց էր տալիս ճանապարհը: Մայրը լռում էր՝ կողքին տղան, որ միացրել էր տեսախցիկն ու նայում էր տանիքին արված լուսանկարները: Բնությունը նման էր ինքն իրեն՝ ուզելով լուսանկարներ պոկել տեսախցիկից, որոնք երբեւէ պետք չէին գալու: Պարզապես բնությունն էր, որ այլ ճար չէր թողնում, քան նկարել ու որոշել, որ հոգիդ ազատեցիր նրանից: Ծառերը՝ անթարգմանելի գույներով իրար հերթագայող, դարուփոս ճանապարհը, տերեւների դեղին հանգրվանը ծիրանենիների տակ, դեղձիների կարմիրն ու սեւը, առուները՝ խոտերի մեջ ծպտված, հանդիպակաց սարերի ճմռթված գոգերը, Օձասարը՝ իր քարոտ գլխով, հեռու ծխնելույզների ծվատվող ծուխը, մոտեցած մի բանի ներկայությունը: Հուզանք ու զանգ:
Կանգնեց եղեգների երամի մոտ, տղային իջնել տվեց մեքենայից, նկարեց նրան՝ պարզապես կանգնած դրանց դեմ հանդիման՝ իր աչքում աճող նրա ահագնացող էությամբ: Հետո տղան ինքը մտավ եղեգների մեջ, շոյեց դրանց գալարուն մարմինները այնպես, ասես շնորհ աներ նրանց: Ոչ ակնհայտ, ոչ երեւալի, այլ այնպես՝ ներսում իմանալով: Ամբողջովին իր մարմնի տերն էր, տեղյակ էր դրանից, որը ցավ էր պատճառում կնոջը, չէր տրվում լուսանկարին, չէր սահմանվում, անգամ մայրն ու տատն ավելի էին նրա

մարմնի տերը, քան ինքը, որ թվացյալ կերպով խոսեցնում էր այդ մարմինը: Նույնիսկ այդ մարմնի ապրելն էր միֆական, սնվելը, աճելը, բջիջների կիսվելը, դրա հնարավոր լինելը: Կինը նման էր եղեգներին՝ կորցրած իր զարուն-ամառը, երիտասարդությունից համարյա վտարվող, կորսնցնող իր ջահել շուքը: Ինքնախաբեություն էր լուսանկարը, կուզեր դալար լինել ինքն էլ, կուզեր ելնել իր տարիներից ու փախչել դեպի այդ անհաս աշխարհը, դեպի բան չիմանալը, անփորձությունը: Դեպի նրա տունը, որտեղ իմացողը կլիներ նա, ինքնավստահը կլիներ նա: Տղան սպանում էր իր չտրվելով, չտեսնելով, իր ինքնատիրապետմամբ, իր լռությամբ: Կամ չէր հասկանում, կամ չէր ուզում հասկանալ: Սիրում էր ինքն իրեն:

Տատն իրենց այգում իջավ: Գնաց, խորացավ ծառերի մեջ, ձուլվեց գույներին: Ծարունակեցին ճանապարհն առանց տատի: Մորը չհրավիրեց նստել դիմացը, ինքը նստեց: Կինը նրան փոխանցեց տեսախցիկը, ու մատները զգալով քսվեցին նրա մատներին: Հպման զգացողությունը մնաց, դրանից դուրս ձեռքերը կարծես մոխրի մեջ լինեին: Մեքենան կանգնեցրեց ինչ-որ այգում, առվի վրա:

Այգին ծփում էր աշունից: Տղան սկսեց ման գալ ծառերի տակ՝ անուշադիր մոր ու լուսանկարչի փոխանակած մի քանի բառին: Մայրը մանրամասներով պատմում էր, թե ում այգին է, ոնց են ոռոգում, առուն ոնց են փորում, մինչ կինը հետեւում էր ծառերի մեջ տղայի կերպարանքին: Չէր կարողանում ընտելացնել նրան, չէր կարողանում հասկանալ իր դերը: Ախոյան էին: Մոտեցավ տղային: Նայում էր աչքերի մեջ՝ փորձելով չվրիպել: — Պառկի փորի վրա,— ասաց նրան: Տղան ենթարկվեց: — Ժիմ արա: Մայրը կանգնած նայում էր: — Էլի: Տղան սկսեց դժվար շնչել: — Էլի: Նրանից սկսեց տարածվել ծանր, բարկ, արբեցնող քրտնահոտը:

Սանձում էր նրան, ցույց էր տալիս իր տեղը: Հաստատում էր իր իշխանությունը: Կտրում էր նրան դեռահասության պաշտպանիչ քողից: Հաստատում էր տղամարդուն նրա մեջ՝ գյամերը քաշելով: Բաներ էր հաստատում նաեւ իր համար, որոնց մասին հետո կմտածեր: Տղան վեր կացավ, ասաց՝ հերիք է, գնաց: Կինը նայեց տրորված գետնին: Ծիրանի տերեւների մեջ դեռ մնում էր նրա հոտը:

Երբ նրանց հետ՝ տուն էր տանում, նստած էր կողքին անձայն: Եղել էին խնձորի՝ պտուղներից ճկռած այգում, նկարել էր նրան՝ ծառերի բերրի փորերի տակ, արեւի մեջ, արեւը աչքի ծիածանաթաղանթից ներս, խնձորներով ճյուղերը թեւերից կախ, նրանց հետ թափված ու շաղ եկած գետնին, բայց ավելի ու ավելի էր հուսահատվել: Կարծես սպառված

էր իր ժամանակը, բայց ցավը միայն դա չէր. պարզապես չէր հետաքրքրում նրան, նրա անմեկնելի ժամանակին, նրա ընթացքին, նրա սքողված մտքերին:

Երբ չհիշելով տուն թեքվող ճանապարհը՝ առաջ քշեց, մայրը հետեւից աղաղակեց, որ տունն անցան: Թեքվեց ու նայեց կողքին նստած տղային. անհաղորդ էր ու ցուցադրում էր իր անհաղորդությունը: Չգիտեր՝ վերագրո՞ւմ էր նրան, թե՞ նա իսկապես ուներ այդ խորությունը:

— Չի կարելի տենց կտրուկ արգելակել,— ասաց հանկարծ:

Երբ հետ էր քշում, որ մտնի տան ճանապարհը, տղան դիմացի սարին նայելով ասաց՝ հերիք է:

Հեռացավ անգրկել: Պարզապես թողեց իր բարկ հոտն ու գնաց: Մայրը մնաց՝ ձեռքով անելու ու հրաժեշտի բառեր գոռալու:

Գյուղից դուրս գալով՝ կանգնեց, ծխեց: Արարատը քաշվել էր ստվերի մեջ, պրկվել էր գորշության տակ, թիթեղ էր դառել, չուներ առավոտվա հուշումները: Իր մեջ էր հավաքել ամբողջ փայլուն մակերեւույթը, կանգնած էր՝ ինչպես երկչափ պաստառ՝ լալ հորիզոնի վրա: Մեքենայի կողքին վշվշում էր եղեգների դարս-դարս խուրձը, որոնցից մեկի խոնարհված գլուխը թափահարվում էր դիմապակու առջեւ: Նայեց այնքան, մինչեւ այլեւս ոչինչ չկար անելու:

Աննա Դավթյան, նոյեմբեր, 2019

Հստակ հիշում էր կովի գանգը, որ ընկած էր կարմիր շլորի ծառի տակ, երբ առաջին անգամ գնացին բացելու Լեւի տան դուռը: Փական չկար դռան վրա, երկու օղակները իրար էին բերված հակերը կապելու պարանով, որի գույնը խունացել էր սպիտակ արեւից: Դուռը հին մեղրագույն ապակիներ ուներ ու կուտակած փոշուց, սարդոստայնից ու յուղից սրտխառնուք էր հիշեցնում: Միջանցքը դատարկ էր՝ չորս գունատված պատ՝ երկու կողմից դռներով: Ձախ սենյակից Խաննան ոչինչ չի հիշում, լքված սենյակ էր՝ առանց հիշողության մեջ տեղ պահանջելու, հավանաբար դատարկ, իսկ աջ կողմի սենյակի պատերը հատակից մինչեւ առաստաղը պատված էին սեւ մրով ու այնպիսի տպավորություն էին թողնում, որ դրանցից կարելի է յուղ քամել: Առաստաղից կախված էր սեւ լամպը՝ մինչեւ համարյա սենյակի կեսը: Պատուհանի տակ դրված էր այն, ինչ մնացել էր թախտից, վրան ընկած էր ամբողջովին սեւ վերմակը: Հնաոճ կամոդի գույնն անհասկանալի էր, բայց վրան դրված էր վառ սպիտակ ճենապակե թեյաման՝ կարմիր վարդե ծաղիկներով: Խաննան ուզեց, բայց զզվեց վերցնել:

Հետո, երբ սենյակի հատակի հին տախտակներն արդեն քանդում էին, քեռու տղաներն հայտնաբերեցին Լեւի զուգարանը, որը բացել էր հենց թախտի տակ. տախտակները սղոցել ու մի կեսմետրանոց փոս էր գոյացրել: Արտաթորանքից տախտակները փտել էին եւ ուղղակի փշրվում էին լոմի հարվածից՝ գերանների վրա թողնելով միայն ժանգոտ մեխերի գլուխները: Խաննան Աբգարի հետ միասին տախտակի մի քանի կտորտանք հանեց՝ շնչելով շեռոտ փայտի փոշին: Սենյակները հատակից դատարկեցին, բացված փոսը մեծ քարեր լցրեցին, հետո բետոն, ու երկու սենյակները տանելի տեսք ստացան:

Տատը շատ տարիներ առաջ իրենց ու Լեւի բոստանների արանքում փշալար էր քաշել տվել: Ընդհանրապես հիվանդության նման մի բան ուներ Լեւի հանդեպ. որոշակի անտանելիություն, անմարսելիություն, խորշանք, զազիր՝ այդքան դռնկից հարեւանի հանդեպ, ում խելագարության աստիճանը դժվար էր որոշել, քանի որ ոչ մեկի հետ չէր շփվում: Ոչ բարեւ, ոչ հաջող, միայն տատին տեսնելիս ասում էր՝ որդիս, անդադար կրկնում էր՝ որդիս, որդիս, ինչից տատի փսխուքը համարյա լցվում էր բերանը՝ սպառնալով դուրս թափվել անատամ լնդերի արանքից: Դրանից զատ՝ էլ ոչինչ չէր ասում, կլոր տարին հագնում էր գորշ պլաշը՝ գոտին փորից վերեւ կապած, կանգնում էր հայաթի փոքր թմբին ու անթարթ նայում էր բոստանի միակ ծառին: Ոչ ոք չգիտեր՝ ինչով է կերակրվում, ինչից է մարմինը միս կապում. Լեւի կենցաղը բոլորովին անհայտ էր աշխարհին:

Միայնակ խելագար ծերուկի մահը շատ անսպասելի բան չէր, բայց Ռուսաստանից ժամանած որդիները, որ գողական աշխարհի ներկայացուցիչներ էին, երկար փնտրեցին հոր մահվան պատճառը, լուր տարածվեց, որ Լեւին սպանել են, բայց ոչինչ չհաստատվեց ու չհերքվեց, մինչեւ որդիները՝ մեծն ու միջնեկը, ձեռնունայն հետ գնացին՝ տունն ու դիմացի բոստանը վաճառելով Խաննայի քեռուն՝ Աբրամին:

Տատը, որ ծիսապաշտական վերաբերմունք ուներ բոլոր արարողությունների հանդեպ, դրանց առաջին այցելուն էր, փակվեց տանն ու Լեւի թաղմանը չգնաց: Օրերով աղոթեց ու անիծեց: Ամիսներով չէր թողնում քանդել փշալարը, բացել Լեւի

տան՝ թոկով կողպված դուռը, նրա անընկալությունը տարածվում էր նաեւ Լեւի տարածքի վրա, չէր թողնում հավաքել ծառի պտուղները, մառանից հանել ու հավերի առաջ էր լցրել մի մաղ շլորը, որ հարսը հավաքել էր ծառի՝ իրենց կողմը թեքված ճյուղից:
Բայց քանի որ տարածքի հետ կապված ընտանիքում բիզնես պլաններ էին հասունանում, քեռին վերջապես քանդեց փշալարը՝ ձեռքերն արյունելով, ու Խաննան ու Աքսելը առաջին անգամ ոտք դրեցին Լեւի մրոտ սենյակները:
Խաննան որոշել էր Լեւի տունը վերածել հյուրատան, որտեղ կընդունեին զբոսաշրջիկների, կկերակրեին ու կքնեցնեին:
Տատը չէր հասկանում մտածվածի իմաստը. ինչպե՞ս կարող էին այդ խելագարի տանը մարդիկ մնալ, ո՞ւր էր չքվելու այնքան տարիների հավաքված մուրը:

Աբգարը՝ քեռու փոքր տղան, ոգեւորված էր: Թողել էր պատմության ֆակուլտետը, արագի մեջ անգլերեն էր սովորում, նախապատրաստվում էր բիզնեսին: Խաննան համաֆինանսավորող դրամաշնորհային ծրագիր էր գտել հատուկ Շիրակի մարզի համար ու փորձում էր գլուխ բերել: Աբգարի հետ անդադար քննարկումներ էր ունենում, թե ինչ կարող էին առաջարկել զբոսաշրջիկներին: Ունեցածը Շիրակի մարզի լերկ բնությունն էր ու մոտակա Արթիկ քաղաքի պատմությունը, որից պետք էր որոշակի հղացք քամել ու առաջարկել որպես տուր պրոդուկտ: Խաննան անորսալի մի փորձառություն էր պատկերացնում եկողների համար՝ այլընտրանքային մի աշխարհ՝ Շիրակի Շամբալա, Շոռագյալի Էլդորադո, հետքերի ու պատմությունների մշուշի միջից տեսիլ դյութական, որը դեռ պետք էր վերծանել ու ձեւակերպել: Տարածքի բույսերը, կենդանիները, ապարները, հանքերը, գաղութը, սարերի քարուքռեն՝ որպես ոսկի…
Աքսելն էր՝ քեռու մեծը, բույսերի ու կենդանիների պատասխանատուն, քանի որ գյուղատնտես էր: Պետք էր նախ ուսումնասիրել, մարդկանց հետ խոսել, գլուխ հանել տեղից ու պատմությունից, սցենարներ կազմել, հետո տալ ուղեվարներին, որ պատմեն:
Խաննան ավարտել էր տարակուսանքի ժամանակը: Չէր ուզում ամբողջ կյանքում երեխաներին դաս տալ, սովորեցնել նրանց ճիշտն ու սխալը, մանավանդ որ ինքն էլ վստահ չէր ոչ մի բանում: Ձեռք չբերեց սովորեցնողի հավակնոտությունը: Հատկապես, որովհետեւ չէր ուզում: Նրան դուր էր գալիս վաղանցիկության աշխարհը, ուր կարելի էր տարուբերվել, ծածանվել: Հասկացությունները երբեք էլ վերջնական չկպան նրան, ամեն բան հաստատվում ու ետ էր ժխտվում, ու սովորեցնելն էլ չփոխեց իրերի դրությունը: Քիչ թե շատ դա՛ սովորեցրեց: Հարափոփոխն ու անկայունը: Միայն սահմաններն էին, որ կայուն կերպով ժխտվում էին Խաննայի գլխում, ու չէր երկնչում աներեւակայելի բաներն իրականություն դարձնելուց:
Աներեւակայելի բաների շարքից էր Աբգարի հանդեպ նրա զգացողությունը: Հստակն այն էր, որ սահմանները նրա գլխում նման էին գյուղի տանձուտի անկայուն չափառներին, որ հյուսված էին բարալիկ մացառներով: Շատ փոքր ճիգ, ու կանցներ:

— Ի՞նչ, եթե քո հանդեպ իմ զգացողությունը սեր ուզելն է,— հաղորդագրություն էր գրել նրան:
Աբգարը դիմադրում էր:
— Աղջի, վաբշե տը տենց բան ասելուց ռեյտինգդ մոտս պիտի որ ընկներ, բայց արի ու տես, որ բարձրացել է: Ինչի՞ց է:
Խաննան ատում էր իր գլխին տնկած լուսապսակը, որ Աբգարն էր հյուսել, ու հիմա դիմադրում էր իր իսկ ստեղծածին: Քանդել էր ուզում՝ Լեւի զուգարանի տախտակների պես:
Ամառվա այն կարճ ժամանակը, որ անցկացրեց գյուղում, որոշիչ եղավ: Օրերը ձգվեցին ու լցվեցին Աբգարից արտածվող մի բանով, որը պարուրեց ու զարդարեց նրան Խաննայի աչքում: Մարմինն աճեց ու առաջ անցավ ինքն իրենից, ներսը խորացավ, ջինջ մթնոտեց ու դողաց: Խաննան վախեցավ նրա համար, նրա հնարավոր ապրումների, տվայտանքի համար, վախեցավ, որ չի հասկանա, կցնցվի, կգժվի: Վախեցավ, բայց ասաց նրան ու հանդիպեց նրա հասկացող, բայց չընդունող, հետաքրքրվող, բայց մերժող պարզությանը: Աբգարը քսաներկու տարեկան էր՝ իր տարիքի ամբողջ ջահելությամբ, իր մարմնի ջերմով, իր բարակ փորով, իր՝ ծառի պնդությամբ:
— Չկպնե՛ս:
Չկպավ, պահպանեց տարածությունը, պահպանեց դժգույն սահմանը:

— Առաջ երբեք կուլ չեմ տվել,— ասաց Ատոմին:
Սերմը դառն էր, մի տեսակ մետաղյա համով: Հետո շրթունքներն ու ատամները սկսեցին իրար փակչել: Ատոմը չէր սիրում, որ սերմը քսվում էր մարմնին, լղոզվում – մնում էր մազերի մեջ: Իսկ Խաննան անկեղծորեն տարածում էր այն ամբողջ որովայնի վրա, հետո ձեռքերը տանում էր քթին, շնչում էր հոտը:
Հանդիպել էին գործարարների մի ֆորումի ժամանակ: Միանգամից էր զգացել, որ նա է: Ատոմը նստած էր ինքնավստահ, ոտքը թեք դրած ծնկին, աջ ձեռքի երկու մատը հենած քունքին: Խաննան շատ ժամանակ չունեցավ մտածելու, բանն ինքնիրեն որոշվեց: Երբ Ծաղկաձորի ոլորանների Չայնիում թեյ խմելուց հետո տուն էր տանում, Խաննան ասաց, որ չի ուզում տուն գնալ: Հենց անցան Ավան մտնող փոքրիկ կամրջակի տակով: Խաննան այնպես էր դողում, որ ակնոցի տակ հստակ սահմաններից ընկնում էր կլոր լուսնի ուրվագիծը երկնքում: Հետո անցավ բարդիների շարքը, ու Խաննան, դրանց բներին նայելով, մտածեց, որ հավանաբար ոչ թե կորիզից աճեցված տնկիներից են բուսնել, այլ կողքից տված շիվն է արմատ գցել ու տնկվել: Քեռու Աքսելը սովորեցնում էր դրանց բնին նայելով տարբերել, թե ինչ եղանակով են տնկված: Սա անպետք ու անհետաքրքիր տեղեկություն կլիներ ամուսնու համար, եթե Խաննան բարձրաձայն ասեր մտքինը: Ու միանգամից որոշումը մտքից ընկավ լեզվին, ուզեց Ատոմին ասել, ենթագիտակցորեն ուզեց ստուգել՝ ինչքա՞նը կկիսի իր հետ.
— Բարդիները շիվերից են աճել:

— Ի՞նչ գիտես:
— Բները սեւ են: Մինչդեռ պետք է լինեն կեչու նման՝ սպիտակ, ողորկ մարմնին սեւ բծեր:
— Տեսա:
— Շարքի մեջ մի երկուսը կան՝ սպիտակ:
— Ավելի առողջ տեսք ունեն:
— Սիրուն են:
— Քեզ տանեմ տո՞ւն:
— Դողում եմ:
— Գիտեմ:
— Չէ:
Մեքենան կանգնեց բենզալցակայանի կարմիր լույսի մեջ: Ամառվա վերջի օդի մեջ լցվեց բենզինի հոտը: Խաննան սիրում էր այդ հոտը, մանկությունից մնացած ինչ – որ հիշողությունների պատառիկներ էին միշտ դուրս լողում դրանից, տեսնում էր գետնին թափված ջրի մեջ բենզինի առաջացրած ծիածանը: Մինչ լցնում էին, Խաննան ձեռքը տարավ կոկորդին, որտեղից դողի հորմոններն էին արտադրվում: Հետագայում Ատոմն ասաց, որ հասկացել էր, որ Խաննան հավանել էր իրեն հենց առաջին օրը, քանի որ ձեռքն անընդհատ պարանոցին էր տանում: Խաննան մտածեց, որ եղածն ուրիշ բան էր հավանաբար՝ մեղքի զգացման քարը կոկորդում, վախը, հուսահատությունը, բայց Ատոմին չասաց դրա մասին:
Ինչ – որ տեղից մառախուղ եկավ, դիմացի մեքենաների լույսերը սկսեցին սպիտակ առկայծել ճանապարհին: Մառախուղի ալիքը զարնվում էր դիմապակուն ու լողում մեքենայի պատերն ի վար՝ թացի պսպղուն կաթիլներ թողնելով սեւ պատյանի վրա: Խաննան զգում էր, որ թեեւ Ատոմն անընդհատ դիմացից վազող ճանապարհին է նայում, բայց իրեն պահում է պերիֆերիկ տեսողության մեջ, որում չգիտեր ուր դնել ձեռքերը, ինչպես տեղավորել մարմինը, որ շվարածի տեսք չունենա: Լացը չէր գալիս:

Ամեն ինչ նման էր այս քարերի մեջ կռնծած բնությանը: Մի քիչ խոտ ու մի երկու ծառ են աճում ապարների հանքերի վրա: Հողի ամբողջ երեսին, եթե դրանք վարելահողեր չեն, շաղ են եկած չեչոտ քարեր՝ տարիների դեղին մամուռը վրան: Հողի երեսը գանգուր է: Գույնը դարչինի ու դափնու խառնուրդ է: Շիրակը հողագույն է, անծառ: Հարուստ է իր լերկությամբ: Վերուվար անող իր գետնով: Ամռանը մի քանի ուժեղ ծաղիկ, լեղի եզան լեզու, խլեզներ, արեւի շամփուրներ, ձմռանը՝ հողմը մեգով երկինք առնում, բուքը ձյան ու ծխնելույզներից մզմզալով դուրս եկող ծուխ: Սառցի լուլաներ: Փոքրիկ լճակներ՝ փոքրիկ լեռների ծոցիկում:
Հայոց աշխարհիկ:
Խաննան ոչ էն է էդ երկրի զավակն էր, ոչ՝ չէր: Երկիրը չէր սիրում մանկության օրրանի պես, այլ գիտակցական կյանքում գլուխը մտած մտքի պես էր սիրում՝ թաքուցյալ ու մերկ: Երբ քշում էր այդ վայրերի միջով, միշտ ինչ – որ ձոն էր պտտվում գլխում, ինչ – որ աննյութական բանով պատում էր այդ հողերը, բայց չէր գրկում,

ուզում էր նայող մնալ: Դա բնությունը չէր՝ իր գյուղատնտեսական կամ առողջարարական կողմով, դրան անտարբեր էր: Անտարբեր էր կանաչությունը սիրող հովերին, էկո հարցերին, վիտամին D – ին: Ուրիշ բան էր զգում: Այդ դաշտերը սեռականություն ունեին, շնչում էին անհասկանալի, քվիր, ջերմին, բուխ: Քարերն ու խոտի տերեւները շեղ – շեղ նետեր էին արձակում՝ հազար ուղղություններից դեպի Խաննայի սիրտը: Հիշողությունն՞ր էին, թե՞ երեւակայական պատմություններ, գերի էին վերցնում: Դաշտերը ցանկություն էին: Դա իր գլխում անհանգիստ տեղավորվող բնությունն էր: Անտառոտը չէր ուզում, շատ խոտը չէր ուզում, այս քարքարոտն էր ինչ – որ կերպ զուգակցվում իր ներսի հետ: Այս բնությանն էր պատկանում իր թաքուն մտքերի տեսարանը՝ ինչպես հողագույնը՝ հողին:

Հիշում էր՝ ինչպես էին գնում ղմու, հավանաբար ամառվա սկզբներին, երբ վարսակի դաշտերում մատնաչափ որդեր էին հասունանում ու ծանր գունավոր կախվում վարսակի ծաղկի գլխից: Ղմին խառնված էր լինում այդ բույսի հետ, ու պետք էր հաղթահարել որդերի հանդեպ սոսկումը, կռանալ, մի կողմ տանել ու քաղել: Երեւակայում էր, որ մեկն իրեն է նայում դաշտից, վարսակի միջից, որ անհրաժեշտ է ոչ թե լավ քաղող լինել, այլ դաշտի վհուկ, հնդկական կինո, ծաղիկ ու զորեղ: Հաղթահարելով՝ պարկեր էր լցնում: Ամբողջ դաշտը գունավոր լաչակներով կանայք՝ ինչպես վարսակի որդերը: Բացվում էին ու կծկվում: Շատ հեռվում ժանգոտ դեղին երեւում էր ավտոբուսը, որը շարունակում էր անմռունչ աշխատել հարյուր տարի հետո էլ: Դրանով եկել էին, դրանով էլ գնալու էին՝ պարկերով բեռնավոր: Տեսարաններով բեռնավոր:

Խաննան աչք չէր բացում հիշողություններից, բայց երկիրը փոխվել էր, հորաքույրն էլ մահացել, ում հետ տուն էին բերում այնքան շատ դաշտեր: Մնում էր հիշողությունները ծալել, մի կողմ դնել կամ ասք ու զրույց սարքել տուրիստների համար, որոնք այնքան կլանված լսում են հնարովի ու անհնար բազում պատմություններ:

— Ես ձեզ կպատմեմ,— ասում են ուղեվարները:

— Ես ձեզ կպատմեմ,— ասում է Խաննան՝ որպես փորձառությունների վարպետ:

Հնարավո՞ր էր, որ Խաննայի պատմությունը երբեւէ նրանց պատմելիքը դառնար:

Դրսի դարպասը ճռնչաց:

Շունը սկսեց հաչել:

Քեռին դարպասն արծաթագույն էր ներկել, ու արծաթի երեսն ի վար սահելով՝ բակ էին թափվում բարձր կանգնած բարդու տերեւները: Տատն ամբողջ օրը ավլում էր դրանք, հավաքում, մի տեղ անում, հետո քամին նորից քշում էր, տարածում բակով մեկ: Տերեւների միջով գալիս էր գյուղապետը՝ Մայիլյանը: Հետեւից՝ փիչխա քութիկը: Ձեռքով բարեւեց տղամարդկանց, Խաննային գլխով արեց: Տան ետնաբակում շղթայով կապված շունն իրեն կտրտում էր:

— Գերեզմանի հարցով եմ եկել:

Խաննան ուզում էր հին գերեզմանատան վերանորոգումը դրամաշնորհային ծրագրի

մեջ ներառել, ու դրա համար անհրաժեշտ էր տեղական ինքնակառավարման մարմնի համաձայնությունը՝ ստորագրության տեսքով: Բայց մի խնդիր կար. Լեւին թաղել էին հին գերեզմանոցում, ու շիրիմը դեռ թարմ էր՝ գերեզմանոցի մեջտեղում. հնարավոր չէր դրա հետ որեւէ բան անել: Իսկ մյուս քարերը հին էին՝ 1800 – ականների՝ խմբված ընտանիքներով, շուրջը բոլորող դարբնված ճաղաշարով ու կառչուն բույսերով: Խաննան հիշում էր այդ քարերի արանքում աճող խնձորուկները, որ մանրիկ ծաղիկներ էին, հետո դրանք տեսավ դեղատանը՝ Պերսենի տուփի վրա: Քաղում էր փոքրիկ փնջով, երբ տատը քարերից մեկին նստած սպասում էր նախրին:
Մտածում էին գերեզմանների վրայից դեն ընկած քարերը բարձրացնել, մի կողմի վրա խմբել, տարածքը մաքրել, ու հույս ունեին, որ այն մասում, որտեղ միայն ավազ ու զիբիլ էր լցված, տուրիստական ավտոբուսի կայանման համար մի փոքր տեղ կբացվեր՝ ճանապարհին հարակից հատվածում: Բայց մեջտեղում տնկված էր Լեւի գերեզմանը ու բոլորովին չէր սազում ավտոբուսի գաղափարի հետ:
— Պետք է սպասեք,— ասաց Մայիլյանը:
— Ինչո՞ւ:
— Տղան գալիս է՝ արտաշիրիմում անի:
— Ո՞ւմ տղան:
— Լեւի:
— Ինչի՞ համար:
— Դե գիտեք՝ ինչ գործի են: Գողական մարդիկ են, բաներ են կասկածում, ինչ – որ նոր ապացույցներ ունեն:
— Ի՞նչ ապացույցներ:
— Շատ բանից տեղյակ չեմ, լսել եմ մենակ, որ Փաշիկի տղաների վրա են կասկածում:
— Ո՞ւմ ինչին էր պետք էդ խեղճ բիձեն:
— Իրենք կիմանան:
— Չեք ստորագրելո՞ւ:
— Մի քիչ սպասեք:
Խաննան թղթերը դրեց սուրճի բաժակի մոտ, վեր կացավ ու հարեւանցիորեն տեսավ տատի ճերմկած դեմքը: Երբ խոսքը գնար Լեւի մասին, տատն այսահարվում էր: Սկսում էր բերանի մեջ քարացած լնդի պատին կտտացնել միակ ատամը, որ դեղնել էր ու երկարել: Խաննան թեւերը կանթեց այն բանի վրա, որ Լեւը տնկվել էր գործի մեջտեղում, ու գյուղապետը թղթերը չէր ստորագրում: Տատն այնքան նեղված էր երեւում, որ անգամ մոռացել էր հյուրին զոռով կերցնելու իր հոգսը, ու, սեւ ձեռքերը գոգին, նստել էր՝ աչքը լուսամուտից դուրս վարունգի դեղնած թփերին:

Տատի կյանքի միֆական, հոխորտոցների ու փոքրիկ լեգենդների մեջ հյուսված պատմությունը սա էր, որը տատը չէր թողնում՝ մոռացվի: Մանկությունն անցել էր վատ: Պատերազմներից հետո սովահար ընտանիք էր: Հինգ քույր էին, մի եղբայր: Տատը մեծից հետո երկրորդն էր: Դպրոցում միշտ լավ էր սովորել ու ավարտելուց հետո ընդունվել էր համալսարան՝ պատմության ֆակուլտետ: Դասի գնալու կոշիկ

չուներ, ու մայրը հաց թխեց, որ քաղաքում ծախի, իրեն կոշիկ առնի: Հացը լավ ծախվեց: Մայրը որոշեց նորից թխել: Այդպես՝ դուրս եկավ, որ եթե թողնի – գնա քաղաքում սովորելու, քույրերն ու եղբայրը սոված են մնալու: Չգնաց դասի: Չսովորեց: Քսանհինգում, երբ արդեն տունը մնացած աղջիկ էր համարվում, ամուսնացավ: Իրար հետեւից ունեցավ հինգ աղջիկ՝ անիծելով մորը, որ իրեն աղջիկ բերող գեներ է թողել: Վեցերորդը, ինչ – որ հրաշքով, տղա ծնվեց: Հավատացյալ էր, հազար սուրբ էր գնացել: Սուրբ Հովհաննես հասել էր բոբիկ ու չոքած: Նստել էր սրբի շեմին ու ոռնալով տղա էր պահանջել, կալոշով խփել էր սրբի անհողդողդ դռանը: Հետ՝ տուն էր եկել վազելով, ճանապարհին ոչ մի տեղ չէր կանգնել: Ծնկներն ամբողջ արյունած էին: Հասել էր աղջիկներից մեկի վրա ու ծեծել:

Տանը գրքեր ուներ՝ Աստվածաշունչ, ավետարաններ, շարականներ: Բոլորի մեջ, ինչ – որ մի էջի վրա պառկած էր Աքսելի փոքր ժամանակվա երկար մազերից մի փունջ: Գրքերը, մոմոտ մատներով շատ թերթվելուց, մագաղաթի հոտ էին արձակում: Ընդհանրապես նրա ամբողջ տունը մոլեռանդ հավատքի հոտ էր բուրում, որ գալիս էր տեղաշորից՝ վերմակներից ու ծանր բարձերից, որոնց մեջ տարիներ թուղթուգիր էր փնտրել: Իր հավատի մեջ որոշակի կատաղություն էր դնում, որի ակունքը ոչ ոք չէր հասկանում: Արդյոք կաթոլիկությո՞ւնն էր այդպես պահանջում: Բայց հարեւան Մարիամը, օրինակ, փափուկ էր, եկեղեցի էլ գնում էր:

Խաննան տեսել էր տատի մի լուսանկարը՝ ֆլամենկո պարող իսպանուհու նման մազերը հավաքած, ոսկե, կլոր ականջօղներով ու խոսուն, չգիտես որերորդ երեխան գրկին դրած՝ նայում է տեսախցիկին՝ կատաղի ձեւով ինչ – որ բան իմացողի պես: Ներքեւ նայես՝ հագին կալոշներ են:

Ամբողջ գյուղում բոլոր տներն ունեին սրբի անկյուններ, տատն էլ ուներ: Քեռին պատի անկյունում բարակ տախտակներով հարկեր էր սարքել, ու տատը դրանց վրա շարել էր սրբերի պատկերներ՝ լուսանկարներ ու ասեղնագործ կտորներ: Պատկերներից ամեն մեկի հետեւում մեկական թղթե վարդ էր կպցրած, ու հարկերի կտորազարդ հատակին պառկած էին բազմագույն վարդարաններ, մոմեր ու արհեստական ծաղիկներ: Ամեն հարկը ուներ իր բարակ ասեղնագործ վարագույրը, ու հարկերի ամբողջ բեմական զարդարանքը դրանց տալիս էր փոքրիկ հնամյա թատրոնի տեսք, որի դերակատարները սրբերն էին՝ հատկապես Մարիամը՝ իր մշտառկա լուսապսակով, փամփլիկ ձեռքերով ու կլորիկ կրծքով:

Գյուղն իրեն կաթոլիկ էր համարում, տատը դրա մոլեգին ջատագովն էր, բայց ոչ տատը, ոչ էլ գյուղում որեւէ մեկը չէր կարողացել պատասխանել Խաննային, թե հատկապես ինչ էր դա նշանակում: Պարզապես տարբերվում էին, եւ այդ տարբերությունը նրանց հավատն էր: Բացատրական միակ նախադասությունը բոլորի բերանում սա էր՝ մենք ֆրանկ ենք, մինչեւ չտեսնենք՝ չենք հավատա:

Տատը օրը տասն անգամ սրբում էր սրբապատկերների փոշին, թափ էր տալիս վարդերի կոկոնները, երկու անգամ մոմ էր վառում բոլոր հարկերում ու աղոթելիս հորանջում էր՝ լայն բացված խոռոչով: Մոմերի առաջ դեղին ցոլում էին փոքրիկ ձեռագործ վարագույրներն ու շարված մատնաչափ գրքերի ոսկեդրվագ կողիկները: Անկյունը լցվում էր մոմե օդով, օդից ամեն ինչ կարծես շարժվում էր,

սրբապատկերները կենդանանում էին ու շնչում, վարդերը ալ փոշի էին ծփում, տատի աղոթելու ժամերը կարծես երազ լինեին, որ Խաննան տեսնում էր հարթմնի: Նա այդ ջերմեռանդությունից ու թատրոնից ինչ – որ բան էր ժառանգել՝ իրերը դրամատիկորեն ապրելու կարողությունը, երազը, օդի շարժումը, կատաղությունը:

Ենթագիտակցությունը փրթած լցվում էր երազների մեջ: Սեռի հոգին: Սեռով էին տրոփում բոլոր առարկաները, տարածքները, մարդիկ: Ինչ – որ կարոտ, լոնգինգ, տասկա, նրանցով պատվելու ցանկություն: Սեռից փափկած, նրբացած ու նվաղած գոյություն: Երբեմն գործ, որ արվում է ձեռքերով, փոքր շարժումներ, անկյուններ, շաղվածություն: Ու միայն երազն է մատնում: Խաննան հայացքների ու հպումների թատրոնն էր սիրում, որ արվում էր անկեղծության, անփութության ու անջանքության քողի տակ: Ամուսինն անվաստակ էր դրանում, վարանոտ, հարցնող, խճճվող, շարժումների մեջ պարապ, հայացքը միշտ կախ:
Երազում տեսել էր նախկին աշխատակցին, որ պաշտոնի էր անցել, ու հեռացել էր նախկին աշխատավայրից: Ու երազում սպասում էր նրան, սպասում էր նրա զանգին ու հանկարծ հայտնաբերեց, որ ունի նրա էլփոստի գաղտնաբառը: Ինչ – որ անհասկանալի սարքի վրա հավաքեց այն, ու հայրական հին տան սենյակը լցվեց լիքը թղթե նամակներով, նկարներով, երկտողերով: Խաննայի հետ էին նաեւ մանկության ընկերուհիները, որոնք նույնպես ուզում էին նամակները կարդալ, բայց Խաննան կատաղած շան պես վրա տվեց, կծեց. միայն ինքն էր կարդալու: Ու նստած էր նամակների դեզի գլխին, ձեռքի տակ ինչ – որ մանր – մունր բացիկներ էին ընկնում, որոնցից հստակ ոչինչ չէր կարողանում զանազանել: Մեկ էլ հանկարծ եկավ նա, ում այնքան սպասում էր, ում անունը չէր ուզում տալ: Բայց պետք չէր, որ տեսներ, որ իր նամակներն են փորփրում: Խաննան մոռացավ, որ գիշերանոցով է, տեղից թռավ, հույս ունեցավ, որ աղջիկները կհավաքեն, հետ կլցնեն նամակները իրենց եկած այլաշխարհիկ ճանապարհով, ու նրան դռան մոտից հետ դարձրեց, տարավ դեպի այն սենյակը, որտեղ մանկության ժամանակ քնում էր տատի հետ: Սենյակը զզզված վերմակներ ուներ ու բարձեր: Գիտակցում էր իր անճոռնի դեղին գիշերանոցը, որ մայրն էր կարել: Բայց ոչինչ չէր կանգնեցնում Խաննային: Ու գրկեց նրան: Ոչ թե ձեռքերով, այլ պաշարեց նրան իր հայացքով ու ետ ստացավ պատասխանները: Երազը սեռ դարձրեց նրանց ամբողջ լուռ առճակատումը: Խաննան ունեցավ նրան իր մեջ: Արթնացավ: Կողքին հանդարտ քնած էր ամուսինը:

Պետք էր երկիրը տեղավորել դրամաշնորհի մեջ: Խաննան մտածում էր բառերը:
Երկիր:
Լեռների մեջ ընկած տարանցիկ ճանապարհի վրա: Ծայրից ծայր ձգվում են պատմությունն ու ծովի երազանքը: Ծայրից ծայր մի քանի ժամ է: Ոտքով՝ մի քանի օր: Մի մեծ խլուրդ փորել ու դեսուդեն է լցրել քարերը: Թթվածին են տարածում: Դեսուդեն է լցրել ծիծաղը: Հին օրերով պատված ենք: Սեւահող ու եղանակներ:

Տասներկու եղանակ: Հոծ ամառ ու ձիգ ձմեռ: Արանքում՝ դաշտերի գունավոր զոլեր, որ չեն տեղավորվում ու ցած են գլորվում բլուրներից: Լեռան դոշին փորված ճանապարհներ: Անտառներ՝ փշի ու ցորենի: Մարգեր ու ձի: Որ մի փեշին հնարավոր է՝ եկեղեցի: Վանականների պատմություններ: Քառուղիներ՝ ամեն մի գրքում: Պայազատներ: Ժառանգություն: Սեւ ու կապույտ աչքեր: Ցորենագույն մաշկ: Բակ ու փոքրիկ այգի: Ծռված դռնակ: Կոշտ ձեռք: Կոշտ ու փափուկ սիրտ: Կողով: Ծառերի չոր կանաչություն: Հասկ: Բարդի: Ագռավ: Քնձռոտ քարեր: Խողովակներ ու լարեր: Լեռան եզրից՝ գմբեթ: Հուշարձաններ: Անհայտ զինվոր: Պաշտամունք: Խաղողի որթ: Դաղձ, ուրց: Անգործ երկաթուղի: Թուրք: Տատասկ, մացառ ու գազ: Մեռել: Ձյան պաստառներ: Գոմաղբ ու ձու: Թշնամական տանկեր: Կակաչների ջերմոց: Ոտի ճամփա: Փակված կածան: Բարակ գետեր: Նվազ ջրվեժ: Կապույտ եղնիկ: Երկրի շարժ: Երեք գույն: Հանքի երակ: Շուրջպար: Ջրամբար, հացենի: Կոպիտ դիմագծեր: Տրակտոր: Մածուն: Որդան կարմիր: Փակ բերան: Անտառի գեղեցկուհի: Աննա վարդ: Առաջնագիծ: Վերջալույս:

Դրամաշնորհի հայտը ներկայացնելու վերջնաժամկետին մնացել էր մեկ օր: Խաննան մտածածը ճխտեց գրանտային լեզվի մեջ, որով խոսում են քաղաքականությունն ու ՀԿ – ները անգամ այն դեպքում, երբ ասելիք չկա: Միշտ էլ կարելի է բառեր ասել. գրանտախոս – գուրու ընկերուհիներ ուներ, որոնցից մեկի լեզուն նրան փոխնախարարի պաշտոն էր խոստանում: Գրելը՝ գրեց՝ կռիվ անելով գրանտային հողմաղացների դեմ, ու հայտն ուղարկեց նշված էլեկտրոնային հասցեով: Գյուղապետի ստորագրությունը բացակայում էր: